

**No. 48330. European Communities
and their Member States and
Armenia**

PARTNERSHIP AND COOPERATION
AGREEMENT BETWEEN THE
EUROPEAN COMMUNITIES AND THEIR
MEMBER STATES, OF THE ONE PART,
AND THE REPUBLIC OF ARMENIA, OF
THE OTHER PART. LUXEMBOURG,
22 APRIL 1996 [*United Nations, Treaty Series*,
vol. 2733, I-48330.]

**N° 48330. Communautés
européennes et leurs États
membres et Arménie**

ACCORD DE PARTENARIAT ET DE
COOPÉRATION ENTRE LES
COMMUNAUTÉS EUROPÉENNES ET
LEURS ÉTATS MEMBRES, D'UNE PART,
ET LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE,
D'AUTRE PART. LUXEMBOURG,
22 AVRIL 1996 [*Nations Unies, Recueil des
Traités*, vol. 2733, I-48330.]

PROTOCOL TO THE PARTNERSHIP AND COOPERATION AGREEMENT BETWEEN THE EUROPEAN COMMUNITIES AND THEIR MEMBER STATES, OF THE ONE PART, AND THE REPUBLIC OF ARMENIA, OF THE OTHER PART, TO TAKE ACCOUNT OF THE ACCESSION OF THE CZECH REPUBLIC, THE REPUBLIC OF ESTONIA, THE REPUBLIC OF CYPRUS, THE REPUBLIC OF LATVIA, THE REPUBLIC OF LITHUANIA, THE REPUBLIC OF HUNGARY, THE REPUBLIC OF MALTA, THE REPUBLIC OF POLAND, THE REPUBLIC OF SLOVENIA, AND THE SLOVAK REPUBLIC TO THE EUROPEAN UNION. BRUSSELS, 19 MAY 2004*

Entry into force: 1 March 2005, in accordance with article 5(2)

Authentic texts: Armenian, Czech, Danish, Dutch, English, Estonian, Finnish, French, German, Greek, Hungarian, Italian, Latvian, Lithuanian, Maltese, Polish, Portuguese, Slovak, Slovene, Spanish and Swedish

Registration with the Secretariat of the United Nations: Council of the European Union, 1 March 2018

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

PROTOCOLE À L'ACCORD DE PARTENARIAT ET DE COOPÉRATION ENTRE LES COMMUNAUTÉS EUROPÉENNES ET LEURS ETATS MEMBRES, D'UNE PART, ET LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE, D'AUTRE PART, POUR TENIR COMPTE DE L'ADHÉSION DE LA RÉPUBLIQUE TCHÈQUE, DE LA RÉPUBLIQUE D'ESTONIE, DE LA RÉPUBLIQUE DE CHYPRE, DE LA RÉPUBLIQUE DE LETTONIE, DE LA RÉPUBLIQUE DE LITUANIE, DE LA RÉPUBLIQUE DE HONGRIE, DE LA RÉPUBLIQUE DE MALTE, DE LA RÉPUBLIQUE DE POLOGNE, DE LA RÉPUBLIQUE DE SLOVÉNIE ET DE LA RÉPUBLIQUE SLOVAQUE À L'UNION EUROPÉENNE. BRUXELLES, 19 MAI 2004*

Entrée en vigueur : 1^{er} mars 2005, conformément au paragraphe 2 de l'article 5

Textes authentiques : arménien, tchèque, danois, néerlandais, anglais, estonien, finnois, français, allemand, grec, hongrois, italien, letton, lituanien, maltais, polonais, portugais, slovaque, slovène, espagnol et suédois

Enregistrement auprès du Secrétariat de l'Organisation des Nations Unies : Conseil de l'Union européenne, 1^{er} mars 2018

**Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ՝

մի կողմից՝ Եվրոպական համայնքների և նրանց անդամ պետությունների,
մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև գործընկերություն
հաստատող,

Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի Հանրապետության, Կիպրոսի
Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Լատվիայի
Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Մալթայի Հանրապետության,
Լեհաստանի Հանրապետության, Սլովենիայի Հանրապետության և Սլովակիայի
Հանրապետության անդամակցությունը Եվրոպական միությանը հաշվի առնելու
նպատակով

Բելգիայի Թագավորությունը,
Չեխիայի Հանրապետությունը,
Դանիայի Թագավորությունը,
Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը,
Էստոնիայի Հանրապետությունը,
Հունաստանի Հանրապետությունը,
Իսպանիայի Թագավորությունը,
Ֆրանսիայի Հանրապետությունը,
Իռլանդիան,
Իտալիայի Հանրապետությունը,
Կիպրոսի Հանրապետությունը,
Լատվիայի Հանրապետությունը,
Լիտվայի Հանրապետությունը,
Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունը,
Հունգարիայի Հանրապետությունը,
Մալթայի Հանրապետությունը,
Նիդերլանդների Թագավորությունը,
Սվստրիայի Հանրապետությունը,
Լեհաստանի Հանրապետությունը,
Պորտուգալիայի Հանրապետությունը,
Սլովենիայի Հանրապետությունը,
Սլովակիայի Հանրապետությունը,
Ֆինլանդիայի Հանրապետությունը,
Շվեդիայի Թագավորությունը,
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը,

ներկայացված Եվրոպական միության խորհրդի կողմից, այսուհետ՝ անդամ
պետություններ, և

Եվրոպական համայնքը և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքը՝
ներկայացված Եվրոպական միության խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի
կողմից, այսուհետ՝ համայնքներ, մի կողմից,

Հայաստանի Հանրապետությունը՝ մյուս կողմից,

հաշվի առնելով 2004 թ. մայիսի 1-ին Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի, Կիպրոսի, Լատվիայի, Լիտվայի, Հունգարիայի, Մալթայի, Լեհաստանի, Սլովենիայի և Սլովակիայի միացումը Եվրոպական միությանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Չեխիայի Հանրապետությունը, Էստոնիան, Կիպրոսը, Լատվիան, Լիտվան, Հունգարիան, Մալթան, Լեհաստանը, Սլովենիան և Սլովակիան դառնալու են, մի կողմից, Եվրոպական համայնքների և նրանց անդամ պետությունների, մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության միջև գործընկերություն հաստատող՝ 1996 թ. ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում ստորագրված՝ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) Կողմեր և համապատասխանաբար ընդունելու և հաշվի են առնելու, նույն կերպ, ինչ Համայնքի այլ անդամ պետությունները, Համաձայնագրի տեքստերը և նրան կցվող փաստաթղթերը:

Հոդված 2

Հաշվի առնելով Եվրոպական միությունում տեղի ունեցած վերջին ինստիտուցիոնալ զարգացումները՝ Կողմերը համաձայնում են, որ Աժխի և պողպատի Եվրոպական համայնքի հիմնադրման պայմանագրի գործողության ժամկետի ավարտի հետևանքով Աժխի և պողպատի Եվրոպական համայնքը վկայակոչող՝ Համաձայնագրում առկա դրույթները համարվելու են Եվրոպական համայնքը վկայակոչող դրույթներ, որը ստանձնել է Աժխի և պողպատի Եվրոպական համայնքի՝ պայմանագրերով սահմանված բոլոր իրավունքներն և պարտավորությունները:

Հոդված 3

Սույն Արձանագրությունը կկազմի Համաձայնագրի անբաժանելի մաս:

Հոդված 4

1. Սույն Արձանագրությունը կհաստատվի Համայնքների կողմից, անդամ պետությունների անունից՝ Եվրոպական միության խորհրդի կողմից և Հայաստանի Հանրապետության կողմից՝ նրանց ընթացակարգերին համապատասխան:

2. Կողմերը միմյանց կձանուցեն նախորդ կետում նշված համապատասխան ընթացակարգերի ավարտի մասին: Հաստատման վերաբերյալ փաստաթղթերը ի պահ կհանձնվեն Եվրոպական միության խորհրդի Գլխավոր քարտուղարություն:

Հոդված 5

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի այն օրը, որ օրը ուժի մեջ կմտնի 2003 թվականի՝ Միանալու վերաբերյալ պայմանագիրը, պայմանով, որ

սույն Արձանագրության հաստատման վերաբերյալ բոլոր փաստաթղթերը ի պահ հանձնվեն մինչև այդ օրը:

2. Եթե սույն Արձանագրության հաստատման վերաբերյալ ոչ բոլոր փաստաթղթերն ի պահ են հանձնվել մինչև վերոհիշյալ ժամկետը, սույն Արձանագրությունն ուժի մեջ կմտնի հաստատման վերաբերյալ վերջին փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:

3. Եթե սույն Արձանագրության հաստատման վերաբերյալ ոչ բոլոր փաստաթղթերն են ի պահ հանձնվել մինչև 2004 թ. մայիսի 1-ը, սույն Արձանագրությունը կկիրառվի ժամանակավորապես՝ 2004 թ. մայիսի 1-ից:

Հոդված 6

Համաձայնագրի տեքստերը, Եզրափակիչ ակտը և դրան կցված բոլոր փաստաթղթերը կազմված են չեխերեն, էստոներեն, հունգարերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, սլովեներեն և սլովակերեն:

Այդ տեքստերը կցված են սույն Արձանագրությանը և հավասարազոր են մյուս լեզուներով կազմված՝ Համաձայնագրի, Եզրափակիչ ակտի և դրան կցված փաստաթղթերի տեքստերին:

Հոդված 7

Սույն Արձանագրությունը կազմված է երկու բնօրինակով՝ չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատիշերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, սլովեներեն, սլովակերեն, իսպաներեն, շվեդերեն և հայերեն. այդ տեքստերը հավասարազոր են: